ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/4.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հուլիսի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

Դ.Կարապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ

Լ.Բասմաջյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Ա.Ոսկանյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Զ.Հայրապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

• «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» հասարակական կազմակերպության հետ 2025 թվականի հուլիսի 1-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N417-25 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Նշվեց, որ

«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» հասարակական կազմակերպության հետ 2025 թվականի հուլիսի 1-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N417-25 պայմանագրում և համապատասխանաբար մրցութային հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ին կայացած նիստի 4/4.2-3-25 արձանագրությունում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ:

Մասնավորապես, «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ին մրցույթի արդյունքում շնորհվել է 2,646,500 (երկու միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումար, սակայն պայմանագրի 1-ին բաժնի, 1.1 կետում նշվել է «2,646,000» թվային արտահայտությունը, նույն վրիպակը առկա է նաև 4/4.2-3-25 արձանագրությունում:

Ուստի պայմանագրի կատարման հետագա ընթացքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է N417-25 պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Հնարավոր սեղմ ժամկետում կնքել համապատասխան համաձայնագիր՝ «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի հետ 2025 թվականի հուլիսի 1-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N417-25 պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հովհաննիսյան -

Դ.Կարապետյան -

Լ.Բասմաջյան -

Ա.Ոսկանյան -

Զ.Հայրապետյան -

Շ.Հովսեփյան -